ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՀայաստանիՀանրապետության Շիրակիմարզի Անիհամայնք
ՀայաստանիՀանրապետությանՇիրակի մարզ, քաղաքՄարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 486-Ա
22 սեպտեմբերի 2022 թվական

ԲԱԴԱԼ ԳԱԼՈՒՍՏԻ ԱՎԴԱԼՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԲԵՐ ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ հոդվածի 2-րդ ենթակետի, 50-րդ և 52-րդ հոդվածների դրույթներով. ***որոշում եմ՝***

Բադալ Գալուստի Ավդալյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Հրանտ Շահինյան փողոց 1-ին նրբանցք թիվ 12/1 հասցեում գտնվող բնակելի տունը /կադաստրային ծածկագիր 08-003-0043-0028/ (վկայական N 09072021-08-0007) և Մարալիկ քաղաքի Հրանտ Շահինյան փողոց 1-ին նրբանցք թիվ 12/2 հասցեում գտնվող բնակելի տունը /կադաստրային ծածկագիր 08-003-0043-0032/ (վկայական N 11082022-08-0034) միավորել՝ դարձնելով մեկ գույքային միավոր և տրամադրել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք Մարալիկ քաղաք Հրանտ Շահինյան փողոց 1-ին նրբանցք 12/1 հասցե:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող՝ Մ. Դարբինյան

2022 թվականի սեպտեմբերի 22
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՀայաստանիՀանրապետության Շիրակիմարզի Անիհամայնք
ՀայաստանիՀանրապետությանՇիրակի մարզ, քաղաքՄարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 487-Ա

22 սեպտեմբերի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Հակոբ Վոլոդյայի Ուռումյանի կողմից /ծնված 1961 թվականի հունիսի 16-ին/ 2022 թվականի սեպտեմբերի 19-ին ներկայացված թիվ 803/19 դիմումը:

Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Երիտասարդականների փողոցի 93 հասցեում 08-003-0026-0037 կադաստրային ծածկագրով հողամասի մակերեսը փաստացի կազմում է 0,04 հեկտար /չեն պահպանվել հողհատկացման, քաղաքաշինական փաստաթղթերը/, որը օգտագործում է Հակոբ Վոլոդյայի Ուռումյանը: 0,04 հեկտար մակերեսով հողամասը առկա շենք-շինություններով օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ Հակոբ Վոլոդյայի Ուռումյանը բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, չի պահպանվել հողհատկացման փաստաթղթերը, բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը և ղեկավարվելով <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ կետով, 29-րդ կետի 1-ին ենթակետով, ***որոշում եմ՝***

1. Վերականգնել Հակոբ Վոլոդյայի Ուռումյանի հողօգտագործման իրավունքը Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք Մարալիկ քաղաք Երիտասարդականների փողոց 93 հասցեում գտնվող բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 0,04 հեկտար մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը

0,04 հեկտար մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող օրինական կառուցված շենք-շինությունների նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Հողամասում առկա ինքնակամ շինության նկատմամբ կայացնել առանձին որոշում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հակոբ Վոլոդյայի Ուռումյանի օրենքով սահմանված կարգով իրազեկելու հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող՝ Մ. Դարբինյան

2022 թվականի սեպտեմբերի 22
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 488 -Ա

22 սեպտեմբերի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱԿՈԲ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՈՒՌՈՒՄՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՐԱԿԱԼԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված կարգի 28-րդ կետի և 29-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հակոբ Վոլոդյայի Ուռումյանի դիմումը. ***որոշում եմ՝***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքում գտնվող Հակոբ Վոլոդյայի Ուռումյանին /կադաստրային ծածկագիր 08-003-0026-/ պատկանող բնակելի տանը և հարակից 0.04000 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք, Մարալիկ քաղաք, Երիտասարդական փողոց, թիվ 93 բնակելի տուն:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող՝ Մ. Դարբինյան

2022 թվականի սեպտեմբերի 22
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 489-Ա

22 սեպտեմբերի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՐԱԿԱԼԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված կարգի 28-րդ և 29-րդ կետերի 1-ին ենթակետի դրույթներով ***որոշում եմ***՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Մարալիկ քաղաքում գտնվող 0.04000 հեկտար մակերեսով հողամասին /ծածկագիր 08-003-0020-/ տրամադրել հետևյալ հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք Մարալիկ քաղաք Բարեկամության փողոց, թիվ 79 հողամաս:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող՝ Մ. Դարբինյան

2022 թվականի սեպտեմբերի 22
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 490-Ա

22 սեպտեմբերի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ 475/1-Ա ՈՐՈՇՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 34-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով. ***որոշում եմ***՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 9-ի <<**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԱՆՋԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**>> թիվ 475/1-Ա որոշման բովանդակությունը շարադրել նոր խմբագրությամբ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լանջիկ բնակավայրում տեղամասային ընտրական կենտրոն սահմանել.
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լանջիկ բնակավայրի մանկապարտեզի շենք հասցեն՝ բնակավայր Լանջիկ 1-ին փողոց, թիվ 29 շենք (պատասխանատու՝ Քրիստինե Հովհաննիսյան հեռ. 077-40-64-78):

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող՝ **Մ. Դարբինյան**

2022 թվականի սեպտեմբերի 22
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՀայաստանիՀանրապետության Շիրակիմարզի Անիհամայնք
ՀայաստանիՀանրապետությանՇիրակի մարզ, քաղաքՄարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 491-Ա

23 սեպտեմբերի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՍԼԱՆ ԱԲՈՒԶԵՏԻ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետի, 62-րդ և 64-րդ կետերի դրույթներով. ***որոշում եմ՝***

Ասլան Աբուզետի Ասլանյանին պատկանող /կադաստրային ծածկագիր -08-003-026-029-001/ (վկայական N՝ 2153785) Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ Կոմսոմոլի փողոց հասցեում գտնվող անասնաշենքը և հարակից 0.1662 հեկտար մակերեսով հողամասը վերահասցեավորել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք Մարալիկ քաղաք Երիտասարդական փողոց, 3-րդ նրբանցք, թիվ 4/1 անասնաշենք:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող՝ Մ.Դարբինյան

2022 թվականի սեպտեմբերի 23
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 492-Ա

23 սեպտեմբերի 2022 թվական

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ՕՏԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՉԱՓԻՑ ԱՎԵԼԻ ՎՃԱՐՎԱԾ ՏՎՅԱԼ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի» 252-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի N 920-Ն որոշման 1-ին կետով սահմանված՝ «Չափից ավելի վճարված անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի կարգի» 11-րդ և 12-րդ կետերի դրույթներով՝ *որոշում եմ*՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրի բնակչուհի Ֆաթիմա Սարգսյանին հետ վճարել **MERCEDES-BENZ E 320** մակնիշի **85DO855** մեքենայի համար վաճառքի հետևանքով չափից ավել վճարված 29415 (քսանինը հազար չորս հարյուր տասնհինգ) Հայաստանի Հանրապետության դրամը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի

պարտականությունները կատարող՝ Մ. Դարբինյան

2022 թվականի սեպտեմբերի 23

քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 493-Ա

23 սեպտեմբերի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀՈՒՇԱԿՈԹՈՂԻ ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով. ***որոշում եմ՝***

1. 2022 թվականի սեպտեմբերի 27-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Իսահակյան բնակավայրում զոհվածների հուշակոթողի բացումը կազմակերպելու նպատակով ապրանքների գնման համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման, հավաքագրման և գնումների բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Անժելա Սաղաթելյանին հանձնարարել.

   Միջոցառման կազմակերպման համար հատկացնել **168 290** (մեկ հարյուր վաթսունութ հազար երկու հարյուր իննսուն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2022 թվականի բյուջեի բյուջեի վարչական մասի 08.2.4.51 դասակարգման 4269 (հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածից:
2. Մշակել և իմ հաստատմանը ներկայացնել միջոցառման ծրագիրը և ծախսերի նախահաշիվը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող՝ **Մ. Դարբինյան**

2022 թվականի սեպտեմբերի 23
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 494-Ա

23 սեպտեմբերի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԱՆՋԻԿԻ «ՋՈՒԶԵՊՊԵ ՊԻՆՈ ՉԻԱՉՈՅԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով ***որոշում եմ՝***

1. 2022 թվականի հոկտեմբերի 3-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լանջիկի «Ջուզեպպե Պինո Չիաչոյի անվան մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության բացումը կազմակերպելու նպատակով ապրանքների գնման համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Գեղամ Գրիգորյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Անդամներ՝ Անուշիկ Գասպարյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լանջիկի «Ջուզեպպե Պինո Չիաչոյի անվան մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Դավիթ Մինասյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լանջիկ բնակավայրի վարչական ղեկավար

Թաթուլ Բուլոյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի ակումբավար:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման, հավաքագրման և գնումների բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Անժելա Սաղաթելյանին.

Միջոցառման կազմակերպման համար հատկացնել **447450** (չորս հարյուր քառասունյոթ հազար չորս հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ՝

2022 թվականի բյուջեի վարչական մասի 08.2.4.51 դասակարգման 4269 (հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածից:

2. Մշակել և իմ հաստատմանը ներկայացնել միջոցառման ծրագիրը և ծախսերի նախահաշիվը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող՝ **Մ. Դարբինյան**

2022 թվականի սեպտեմբերի 23

քաղաք Մարալիկ